

# ՆԵՐԿԱՅ ՃԱՊՈՆԼԻ

Մ Ի Շ Է Լ Ռ Լ Վ Ո Ւ Ւ

Առանց կանգ առնելու տիրապետութեանց և պատերազմ-ների յաջորդութեան վրայ, երբ մարդ զրադուի միայն մեծ յեղաշրջումներով, որոնք՝ առանձին վերցրած՝ իրօք որ հետաքքիր են, և մէկ ընդհանուր հայեացք ձգէ ճապոնի պատմութեան վրայ, կը նշամարէ երկու խոշոր դէպքեր. սրանք ամենից աւելի գերաշշոր են և ցցում են ազգային զարգացման երկու էական կէտերում. մէկն է՝ Քրիստոսից յետոյ վեցերորդ դարում չինական քաղաքակրթութեան ներմուծումը, իսկ երկրորդը՝ արևմտեան քաղաքակրթութեան ներմուծումը, տասնիններորդ դարի կէսերին:

Ապա ուրեմն ճապոնական պատմութիւնը բաժանում է երեք գլխաւոր շրջանների, որոնք վերաբերում են բաղաքակրթութեան երեք բոլորովին տարրեր վիճակների. առաջին՝ նախնական քաղաքակրթութեամբ. երկրորդ՝ հին ճապոնը, ուր չինական ճապոնն իր ինքնուրոյն քաղաքակրթութիւնն աւելանում է տեղականինի վրայ, և երրորդ՝ նոր ճապոնը, ուր արևմտեան քաղաքակրթութիւնը գալիս է ամբողջացնելու միւս երկուսը:

Հէնց այս վերջին շրջանն է, որ պիտի պարզեն:

Թիչ առաջ ասածից արդէն հետևում է որ 1867-ի ճապոնական յեղափոխութիւնը նրա պատմութեան մէջ միակը չէ, այլ 550 թուին (Ք. յ.) ունեցաւ իր նախորդը: Եթէ տասնիններորդ դարի այդ յեղափոխութիւնը զարմացրեց եւրոպացիներին, որոնք քիչ են վարժուած արագ կազմակերպութեանց,

1) Յօդուածի հեղինակ՝ ուսուցչապետ Մ. Խըվոն ճապոնում երկար ապրիներ ուսումնասիրած է ճապոնացիների լեզուն, պատմութիւնն ու էլին և նոր քաղաքակրթութիւնը, որոնց մասին արդէն պատկառելի էջեր է ըրատարակած:

ընդհակառակը՝ ճապոնացիներին բոլորովին բնական թուեցաւ. նրանք տասներեք դար նոյն ճկունութեամբ և հաստատութեամբ արդէն կատարել էին ուժի միենոյն շըջանը, գեռ աւելին էին արել նախորդ յեղափոխութեան ժամանակ, որը շատ ամելի խոր էր, քան երկրորդը. վերջինս չէ ներկայացնում այն հրաշալի բնաւորութիւնը, որ ընդհանրապէս վերագրում են նրան:

Մեզ հաշիւ տալու համար, սկսենք լաւ որոշել այս յեղափոխութեան իսկական պատճառները, որոնցից պիտի ծագէր նոր ձապոնը, որովհետեւ այլապէս չենք հասկանայ այն արդինքները, որոնք ծնուեցան այդ պատճառներից. իսկ սրանք արդէն պարունակում էին ժամանակակից յառաջադիմութեան սաղմերը:

Երբ մարդ դէպքերի լոկ մակերևոյթականը, արտաքինն է դիտում, հարցը խիստ պարզ է թուում. կարծես հետեւեալ պատկերն է ստացւում:

Տասնըլեցերրդ դարի կէսերին պորտուգալցիներն էին, որ երևան հանսեցին ձապոնը: Մենդեզ Պինտոն առաջին անգամ 1842-ին ցամաք դուրս եկաւ ձապոն, և սուրբ Ֆրանցիսկոս Քավերը եօթը տարի յետոյ եկաւ՝ այստեղ առաջին անգամ քարոզելու քրիստոնէութիւնը: Յետոյ սպանացիները հասան իրանց հերթին, և սրանց հետ էլ ֆրանչիսկեան կրօնաւորները: Ճապոնցիներն սկզբում հիւրասէր բարութեամբ ընդունում են այս օտարականներին, «հիւսիսային բարբարոսներին». բայց քիչ յետոյ, մի կողմից պորտուգալցի վաճառականների ու ճիզուտների, իսկ միւս կողմից սպանացի վաճառականների ու ֆրանչիսկեանների մէջ կըբու մրցութիւն է ծագում և այն աստիճան, որ սպանում է խանդարել ժողովրդի խաղաղութիւնը: Միենոյն ժամանակ՝ ճապոնցիները նկատում են, որ, սովորաբար, երբ երրորդացիք քարոզիչներ են ուղարկում հեռաւոր կողմեր, քիչ յետոյ էլ զինուորներ են ուղարկում: Ուստի կասկածում են, թէ չինի՞ կրօնափոխութեան մի փորձ է դա, որ կանխագուշակում է տիրապետական ձգուում: Ահա թէ ինչն տասնեօթերորդ դարի սկիզբից մի արմատական հրաման արդեկեց քրիստոնէութիւնը, արտաքսեց քարոզիչներին. միայն հոլլանտացի վաճառականներին թոյլ տրուեցաւ մտնել երկիրը. սրանք խաղաղասէր առևտրականներ էին:

Այսպիսով՝ արցիպելագոսի հանգրուանները փակուեցան. ապա ձապոնը խաղաղ ապրեցաւ և փակուելով ինքն իր մէջ՝ միշտ զարգացրեց իր զտուած քաղաքակրթութիւնը: Այս խորին խաղաղութիւնը աւելց մօտ երկու հարիւր յիսուն տարի:

Բայց 1853-ին հասնում են ևս նաև նաւերը։ Հրամանատար Պեր-  
ըին Ամերիկայի անունով գալիս է, բռնի մոցնում արևմտեան  
վաճառականութիւնը։ Ծապոնցիք թնդանօթների սպառնալիք-  
ների տակ զիջանում են այդ գերազանց ուժին։ Ծապոնը բաց-  
ւում է և արևմտեան քաղաքակրութիւնը վերջապէս կարող է  
ազատ թափանցել այնտեղ։

Այս է իրերի արտաքին տեսքը։

Սակայն եթէ ինչը խորը քննենք, պատկերն իսկոյն կը  
փոխուի. Պերրիի գալուստը լոկ մի առիթ կը թուի, որ կը  
շտապեցնէ վաղուց պատրաստուած ճգնաժամը. այսինքն՝ կա-  
յին զօրեղ պատճառներ, ճշմարիտ հիմքեր՝ հեռաւոր ու խոր։

Ի՞նչ էին ժողովուրդն զբաղեցնող պատճառները։

Այդ պատճառները նախ՝ բարոյական, ապա՝ տնտեսական  
և յետոյ՝ քաղաքական էին։ Համառօտակի նշանակենք այդ բո-  
լորը, որովհետև դրանք արդի կազմակերպութեան իսկական  
իմաստը լաւ ըմբռնելու կ'օգնեն մեզ իսկոյն։

Բարոյական պատճառները կարող են երեք գլխաւոր ձգո-  
տումների բաժանուել — չինական դասական ոգին, ապա ճապո-  
նական ազգային ոգին, և յետոյ՝ արևմտեան գիտական ոգին։

Սրանցից առաջինը սովորեցնում էր՝ ի միշտ այլոց, թէ  
քաղաքականութիւնը ծագում է բարոյականութիւնից, և հետե-  
ւարար, եթէ միապետը բռնաւոր դառնայ, ժողովուրդն իրա-  
ւունք ունի ապստամբելու նրա դէմ։ Հին իշխանութեամբ՝ ճա-  
պոնական կայսրութիւնն երկու ներկայացուցիչ ունէր. վերե-  
ւում՝ կայսրը, իբր ամենակարողութեան տեսական աղջիւր.  
իոկ ներքեւում Շոգունը, որ իրաւունքով պարզ հրամանատար,  
իսկ իրօք՝ ֆիզիքական ոյժի յափշտակիչ էր. ծապօնացոց հա-  
յեցքով Շոգունն էր բռնաւորը, և նրան կործանելու ամենալաւ  
միջոցն էր նրան ներկայացնել իբր անհաւատարիմ պաշտօնեայ,  
իբր կայսեր երկնային իրաւունքի հակառակորդ։ Այսպէս՝  
տասնեօթերորդ դարուց սկսած՝ ազնուազարմ իշխան Միտոն  
քաջալերում էր փիլիսոփայ պատմիչների մէկ ամբողջ դպրոց,  
նրանց երկերին նպաստելու համար մէկ միլիօնից աւելի ծախ-  
սելով տարեկան։ Մրանց երկերը մանաւանդ տասնեօթերորդ  
դպրում, ժողովրդի մէջ տարածեցին կայսերական վերակազ-  
մութեան քաղաքարը։ Վերոյիշեալ տոհմի վերջին գլխաւորն  
էր, որ հնչեցրեց յեղափոխական ազգարարը։

Դասնանք ազգային ոգուն. նշանաւոր մատենագիրների  
մի խումբ, ազգային հնութեան հիացքով լցցուած, աշխատում  
էր վերակենդանացնել ամբողջ նախնի ծապօնը, կըկին ներ-  
մուծել Շինտոյիզմը, և հետեւաբար վերահաստատել աստուած-

ների որդու հեղինակութիւնը \*): Այս նոր մատենագիրները ծայրայեղ ազգասէրներ էին, խորշում էին ամեն օտարոտութիւնից: Սակայն, ինչպէս որ կայսրը չինասէր գիտունների համար իդէալական իմաստուն էր, այնպէս էլ ճապոնասէր գիտունների համար նաև կենդանի աստուած էր, որին ամենքը պարտաւոր էին ծառայել. ահա թէ ինչ էին քարոզում նրանք իրանց անթիւ գրութիւններով՝ ամբողջ տասնութիւրդ դարի ընթացքում: Եւ այսպիսով էր, որ ամենազդու կերպով պատրաստուեցաւ յեղափոխութիւնը՝ պահպանողական հնագէտների մի խմբի ձեռքով:

Վերջապէս, փիլիսոփայ պատմագէտներին և ապա հայրենասէր պատմագէտներին եկան, միացան իսկական գիտնականները: Շոգունական կառավարութիւնը ժողովրդական կըրթութեան համար շատ բան էր արել. սակայն այդ կառավարութիւնը միայն գրական ուսմունքներն էր ճանաչում. նա արգելում էր գիտական ուսումնասիրութիւնները՝ վախնալով այն վտանգաւոր նորութիւններից, որ դրանցից կարող էին ծնուիլ, թայց ճապոնցիները արդէն ձանձրացել էին դասաչում. նա ճարտասանութիւնից, նոյնպէս լեզուարանութիւնից, ոչ պակաս նաև պատմութիւնից: Այս տեսակէտներից՝ նրանց տասնութերորդ դարը նոյնչափ բեղմաւոր է, որչափ ֆրանսական տասնիններորդ դարը, և որոնումների դաշտը գրեթէ սպառուել էր Նրանք կուղէին ուսումնասիրել բնագիտութիւն, քիմիա, մանաւանդ կենսաբանութիւն, որն այնպէս հարուստ է օգտակար կիրարկութիւններով: Սակայն 1771-ին էր միայն, որ հոչակաւոր բժիշկ Սուղիտա Ղեմբակուն կարողացաւ անդամահատել առաջին անգամ՝ մէկ ոճրագործի դիակ: Այսուամենայնիւ ճապոնցի գիտնականները մինչև այդ ժամանակ շարունակում էին աշխատել խիստ ծածկաբար և իրանց կեանքը վտանգի ենթարկելով: Իրերի այս դրութիւնն արդէն ցոյց էր տալիս, թէ շոգունական կառավարութիւնը թշնամի էր յառաջադիմութեան, այնպէս որ ազգի ամբողջ մտածող դասակարգը հետզհետէ պատրաստեց նրա անկումը: Այսպիսով դասական ոգին տասնութերորդ դարից ի վեր սկսել էր շուգունականութեան բարոյական հիմքերը կործանել. ազգային-

1) Ընթերցողին յայտնի է, որ ճապոնական աւանդութեամբ, նրանց կայսրը ծագում է աստուածների սերնդից և անընդհատ ժառանգութեամբ հասնում ցարդ. և ահա վերոյիշեալ մատենագիրների ձկառումն էր շեշտել նաև այդ ինդիրը, տալ նրան գործնական իմաստ, որ ի վերջոյ յաշողեցը բնութ. թ.

ոպին տասնութերորդ դարում ամենամեծ ուժգնութեամբ ցընցել էր այդ հիմքերը. տասնիններորդ դարում էլ գիտական ոգին եկաւ, հասցըց վերջին հարուածը:

Որպէսզի ամին ինչ տապալուէր, շոգուններին մնում էր միայն, զարգացեալ դասի ատելութիւնից յետոյ, գրգռել նաև ժողովրդի դժգոհութիւնը և իշխանների զգուանքը: Շուտով տնտեսական կեանքում հանդէս եկաւ դա, քանի որ աւելի էր ծանրացած օտար արտադրութեանց ներմուծումն արգելող ճիւղային սիստեմը. վերջինս երկու դարից ի վեր փակում էր ծառապնն արտաքին ամեն վաճառականութեան առջև. իսկ երկրի ներսում բոյն էին դրել գաւառային մաքսատները, աշխատաւորներին ճնշող կարգեր կորպորացիաներ, (согоргатион), տրըստներ, կարծ խօսքով՝ ամեն տեսակ կեղծ ճնարքներ, որ կարող են աւերել մի ժողովուրդ: Կայսրութիւնը չէր կարող այլ ևս կերակըել իր աճող բնակիչներին. սովերը, համաճարակ ախտերը համում էին իրար յետեից՝ առաջ ըերելով ապստամբութիւններ, որոնցից մէկի պարագումը հէնց ինքը Հէյնաչիրօ փիլիսոփան էր: Աղդը շնչասպառ էր լինում այս փակուած արշիպելագոսում, և ինդրում, որ իրան տան օդ, ազատութիւն, թոյլ տան գործադրել իր ուժերը:

Այստեղից տեսնում է, որ տասնիններորդ դարում երկրի բացուելը չէր, որ տնտեսական կեանքում արտադրեց վերջնական պայթումը: Ընդհակառակը, տասնեօթերորդ դարում երկրի փակուած լինելն ու չափազանց ճնշուած դրութիւնն էին, որ յառաջացրին այդ պայթիւնը:

Վերջապէս քաղաքական պատճառներն էլ շտապեցրին այդ քայբայումը: Ինչպէս ֆրանսական հին միավետութիւնը, շոգունական կառավարութիւնն էլ՝ միաժամանակ բազմաթիւ սիսալներով ու անշնորհը վերանորոգումներով՝ վտանգել էր վարչութիւնը՝ ամրող տէրութեան այդ էական հիմքը: Կառավարութեան նախանձող իշխանների ագահութիւնը կարողացաւ օգտուել անկման այս շրջանից: Հիւսիսակողմեան մհծատոհմ Սացումանեանը, Զոլիունեանք պատրաստւում էին քաղաքական կռուի. իսկապէս կարելի է ասել, 1850-ից արդէն դատապարտուած էր հին ոեժիմը:

Եւ ահա հէնց այդ ժամանակ էր, որ ներքին այս պատճառների ազդեցութեանը գալիս է, նպաստում՝ արտաքին, վըճռական պատճառը, այսինքն՝ գալուստը օտարների, որոնք արդէն շատ անգամներ, տասնիններորդ դարի առաջին ամբողջ կիսին, եկել էին արգելուած կղզու չորսդին թափառելու.—

ոռուսները 1805-ից, յետոյ՝ անգլիացիք, վերջապէս՝ ամերիկացիք Կալիֆորնիայի գաղութ լինելուց ՚ի վեր: 1842-ին կառարութիւնը սարսափած՝ հրամայեց իշխանական զարմերին (daimios) զինուել այդ կարելի թուացող յարձակման դէմ: Դա նման էր հռովմայական կառավարութեան այն խոհեմ հնարքին, որով երկրի սահմանների պաշտպանութիւնը յանձնում էր բարբարոս պետերի: 1846-ին իշխան Միտոն խնդրեց Միացեալ Նահանգներին, որ մի նաւատորմիդ ուղարկեն ճապոն: 1853-ին Պերրիի հրամանատարութեամբ հասաւ այդ նատորմիդն ու բիչ յետոյ բռնկել տուեց յեղափսխութիւնը:

Թէ ինչպէս եղաւ այդ յեղափսխութեան ընթացքը, որ կարելի է այնքան տեսակչաններից մօտեցել Փրանսականին, այստեղ չենք կարող մանրամասնորէն մէջ բերել. բաւականանանք յիշատակելով թէ, երկրի ներսում, դրա ընդհանուր արդիւնքներն եղան շոգունականութեան կործանումը, ֆէօդալականութեան շնչումը, և վերանորոգուած կայսերական իշխանութեան ձեռքում հաւաքուած վարչական նոր կեդրոնացումը. իսկ արտաքին մասում՝ երկրի բացումը և անմիջական շփումը քաղաքակիրթ աշխարհի մնացեալ մասի հետ:

Սակայն ինչ որ ամենից աւելի պէտք է շեշտել՝ դա այն դանդաղ կազմակերպութիւնն է, որ այս մեծ շարժումին կարապետեց, որովհետեւ դա շատ պարզ կերպով և հէնց սկզբից մեզ ցոյց է տալիս յաջորդող յեղափսխութեան բնոյթագծերը. Իրօք ինչ էին ուղում ճապոնցիք, երբ կործանում էին կառավարական նախկին ձեւը: Ուղում էին ընդունել մեր կրծնը: Երբէք: Ուղում էին իւրացնել մեր ընդունել մեր բարոյականութիւնը: Երբէք: Ուղում էին իւրացնել մեր ընտանեկան կամ ընկերական կմզմը: Ոչ էլ այդ: Նրանց ճշմարիտ ցանկութիւնն էր, եւ կրի ներսում. ջնջել-ատելի դարձած կառավարութիւնը. իսկ արտաքին կողմից՝ փոխ առնել Արևմուտքից սրա նիւթական յաջողակութեան տարրերը: Ոչ մի քան աւելի բնական չէ, քանի որ մի կողմից վաղուց ի վեր Նրանք նախանձում էին մեր գիտութիւններին և դրանց օգտակար կիրարկութեանց, այսինքն միակ քանին, որ դեռ պակասում էր ճապոնական քաղաքակրթութեան. և քանի որ միւս կողմից՝ երբ Արևմուտքը գալիս է սպառնալու՝ նրանք իսկոյն ըմբռնում են, որ անհրաժեշտ էր միենայն ձեռլ զինուել, որպէս զի կարող լինին պաշտպանութիւն: Միաժամանակ զգում էին, թէ իրանց էին երազի իրագործումովը (այսինքն՝ օտարների հետ վաճառականութիւն) անհրաժեշտ էր ազգային հարստութիւնը զուգընթացօրէն աճեցնել:

Ուստի այժմեանից կարելի է գուշակել, թէ ինչ կը դառնայ ներկայ ձապոնը:

Ի՞նչպէս լաւատեսներն են կարծում, գուցէ այդ տարօրինակ ժողովուրդը հրաշագործ ու անսպասելի մի յեղաշրջում կ'ունենայ, և, սիրահար մեր զարգացման՝ միանգամից և հիացքով ու ամբողջովին կընդունէ և մի քանի տարում կիւրացնէ մեր բաղաքակրթութիւնը: Կամ, այդ կիսաբարբարուցեղը մի դժբախտ ու շտապ յեղաշրջում կունենայ, և մեղ նըմանելու ազանութեամբ՝ լոկ մակերեւոյթօրէն և բեկունութեամբ կը կարողանայ մեզ նմանուել:

Ո՛չ մէկը և ոչ էլ միւսը. այլ խիստ լուրջ և խիստ խոնամաբար կը կազմակերպուի այդ զտուած ազգը, որ գիտէ ընտրել ինչ որ ուրիշների ընտիր մասն է կազմում, և որ կատարեալ ու լաւ հասկացողութեամբ է անում ամեն ինչ: Ուրեմն մեր բարոյական կեանքին բնաւ չեն հետեւում. միակ բացառութիւն կազմում են մտաւոր որոշ մեթուներ: Խսկ մեր ընկերական կեանքին նոյնպէս չեն հետեւում, բացի ճոխութեան վերաբերեալ մի քանի հաստատութիւններից, որ օգտակար կը լինէր ցոյց տալ օտարներին: Սակայն դրա փոխարէն միշնիւթական կեանքին արագ և կատարելապէս հետեւեցաւ այն ամեն բանում, որ կարող էր լինել իրօք գործնական:

Այս է, որ պարզ երեսում է, երբ մարդ՝ օդային դիտողութիւնները մի կողմ թողնելով՝ մօտից դիտում է խնդրի էութիւնը, մէկիկ-մէկիկ ճշգրիտ կերպով քննելով այն ճշմարիտ գործերը, որոնցից կազմում է մի բաղաքակրթութիւն:

Պարզ է, որ չենք կարող այստեղ այդ երկար ու կանոնաւոր ուսումնասիրութիւնը տալ. էսկան արդիւնքները ուրուագծելով բաւականանանք: Ուստի, ճապոնական բաղաքակրթութիւնը յառաջ բերենք, անցնենք մակերեւոյթական արտաքինից, որը քաղաքակրթութեան լոկ փայլուն փրփուրն է կազմում, և ուղղակի դիմենք ինդրի խորը, այսինքն՝ մարդու խսկական կարիքներին, որոնք բոլորն էլ ձգտում են մեր կեանքին գոհացում տալու. յետոյ ամեն քայլափոխում համեմատենք հին ռեժիմը նորին հետ:

Մարդկային՝ կեանքում ամենից առաջ նկատուող տարրերը մեր սկզբնական երեք կարիքներն են—սնունդ, բնակարան և հագուստ: Տեսնենք արևմտեան ազդեցութիւնը կարողացմաւ որ և է բարեփոխութիւն մտցնել այդ կարիքների մէջ:

Մնունդի կողմից՝ յիշատակութեան արժանի ոչ մի փոփոխութիւն չէ կարելի ցոյց տալ: Մնունդի և խմիչքների բա-

Նակի տեսակէտից նախկին կառավարութիւնը հաստատած էր ծախսի վերաբերեալ խօստ մանրակրկիտ օրէնքներ, որոնց նպատակն էր արգելել մանաւանդ շույլ ծախսերը. ընտանիք-ների համար որոշուած էին՝ նրանց ընկերական պայմանների համեմատ՝ խիստ պարզ մննդացուցակներ: Նոր կառավարութիւնը ջնջեց այս օրէնքը, որ առաջին հայեացըից բռնաւոր է, իսկ էապէս՝ հայրական: Բայց ճապոնցոց ժուժկալութիւնը միշտ միևնոյն մնաց, և յատկապէս խմիչքների նկատմամբ նրանք դեռ շարունակում են իրանց սովորում: Իսկ ինչ վերաբերում է հեղուկ կամ թանձր մնունդների որակին, այդ ևս ոչ մի փոփոխութիւն չի կրեց: Հանքային ծագում ունեցող մնունդները ոչ մի փոփոխութիւն չի կրեցին: Բուսական ծագում ունեցողներից գարեջրի հետզհետէ աճող սովորոյթից աւելին չէ կարելի ցոյց տալ: Գարեջրի արտատրութիւնն էլ, սակայն և այնպէս, աւանդական բրնձագինու մէկ քառասներորդ մասից աւելի չէ: Կենդանական ծագում ունեցող ուսելիքների կողմից՝ հաշուեցուցակները ցոյց են տալիս մսի գործածութեան որոշ չափով աճելու: Սակայն ճապոնցիք էապէս մնացել են ինչ որ էին, այն է՝ բուսակեր և ձկնկեր:

Կը նշանակէ, որ մննդի խնդրում արևմտեան ոչ մի լուրջ աղդեցութիւն չեն կրած ճապոնացիք:

Միևնոյն բանը կը տեսնենք նաև բնակարանների խընդրում: Բնակարանների հարցը մի մեծ հանելուկ է, որ այս գեղասէր ու նըբամիտ ժողովուրդը կարողացել է լուծել: Իրօք մըրոնք են այն էական պայմանները, որոնց հիման վրայ պէտք է շինուի տունը: Նախ՝ ապահովութիւնը, ապա՝ պատշաճաւորութիւնը իր բարոյական տարբերով, որ կը տեսնենք շուտով, և որ չափազանց անտես են առնում մեր ճարտարապետներն իրանց գրութեանց մէջ. յետոյ՝ տնտեսագիտութիւնը, որ մեր ճարտարապետներն էլի և դեռ աւելի են մոռանում կամաւ:

Ապահովութիւնն ինքնին պէտք է որ երեք բան նկատի ունենայ. — մարդկային կեանքը, որ ամրութիւն կը պահանջէ. առողջութիւն, ինչ որ կը պահանջէ առողջապահութիւնը. վերջապէս ինչըերը, որ հրդեհի և գողութեան դէմ պաշտպանուելու պէտք ունին:

Արդ, ամրութեան տեսակէտից՝ ճապոնական տունը շինուած է բաւարար հաստատութիւն ունեցող նիւթից: Երկրաշարժների դէմ դեռ աւելի դիմացկուն է, բան եւրոպական տունը, որովհետև հիմք չունենալով՝ դադարեցնում է երերումների աճող ծաւալումը, և որովհետև խիստ ծանր տանիքը պահպանուելու պէտք է հաւասարակութիւնը:

Առողջապահութեան տեսակէտից էլ ճապոնական տունը մերինից գերադասելի է, քանի որ պատեր չունի, այլ շարժական շրջափակեր միայն, որոնք ամառը կը վերցուին, իսկ ձևմեռը ցըսից կը պաշտպանեն, առանց արգելելու սակայն շարունակական օդափոխութիւնը. հետևաբար մեր ծանրաշէն ընակարաններից աւելի լաւ է ճամապատասխանում մարդկային ամենամեծ կարիքին, այն է՝ շնչառութեանը: Ահա թէ ինչու բժշկական դիտողութիւնը հաստատում է այդ երկրում, թէ փայտէ աններում ապրողների մէջ աւելի քիչ հիւանդութիւն, մանաւանդ հրեխանների մէջ քիչ մահ է պատահում, քան օտարապդի ընակչութեան մէջ, որոնք աղիւսէ կամ քարէ տներում են ապրում ճապոնում:

Իսկ ինչ վերաբերում է ինչքերի ապահովութեան, ճապոնական տունը իր գիշերային փեղկերով բաւ է հեռացնելու դողերին, որոնք այստեղ շատ քիչ վատանգաւոր են: Դրա փոխարէն ճապոնական տները բոլորովին անպաշտպան են հրդեհի դէմ. սակայն այդ յաճախադէպ պատուհասը նրանց համար նոյնչափ աւերիչ չէ, որչափ եւրոպայում, որովհետև տան արժէքը շատ չէ, ապա քիչ առարկաններ է պարունակում: իսկ թանկագին իրեղէնները գրուած են լինում մի կողմ, անկիզեւ լի մի շինուածքի մէջ:

Անցնենք ընակարանների պատշաճաւորութեանը. այդ տեսակէտից էլ տունը կարելի է բաժանել երեք մասի—աղգային կարիքների յարմարութիւն, ապա՝ գեղեցկութիւն, և յետոյ դիւրութիւն,

Արդ՝ ճապոնական տունը, իր շինուածքովը, արկելականութեամբը, և այլն, շատ լաւ համապատասխանում է տեղական կիմային պահանջներին, ինչպէս և նիւթական միւս բուրու պայմաններին: Համապատասխանում է նաև ժողովրդի բարոյական ըմբռնումներին, որոնց մէջ պէսաք է շեշտել իր գեղասէր հակումները: Յոյների եղայր ճապոնցոց համար կատարեալ տունն այն է, որ ամենալաւ կերպով համապատասխանում է իր իսկական կոչմանը, սկսած շինուածքից (իիստ պարզ գծերով) մինչև ամենափոքրիկ առարկան, որի գեղագիտական ընաւորութիւնը պէտք է ներդաշնակուի իր իրական գործածութեան հետ: Հետևելով այս հասկացողութեան, նրանք զանց են առնում տան ճակատը, որովհետև ոչ մի ընտանիք չի ապրում փողոցում: Նրանք գեղեցիկ կարասիներով չեն լեցնում գահինը, որովհետև ընդունաբանը շուկայ չէ: Նրանք մտերիմներին համար են պահում միշտ իրանց ամենասիրուն սենեակները, որ լուսառատ բացւում են հրաշալի պարտէզների վրայ:

իսկ ինչ վերաբերում է դիւրութեան խնդրին, նրանք ամբողջովին արհամարհում են այն ամենը, որ մենք անսուանում ենք հեշտակեցութիւն։ Ուրեմն նրանք ոչ մի կարիք չունին կուտահեղակացութիւն։ Ուրեմն ամեն իրեղէնները, որոնց անհրաժեշտութեանը կելու այն ամեն իրեղէնները, որոնց անհրաժեշտութեանը մենք հաւատացած, պրծած ենք, այդ բաները ճնշիչ են նրանց համար։

Բայց դրա փոխարէն, գաղափարների այդ շարքում, շատ շուտով իւրացըին երկու միակ օգտաւէտ յառաջադիմութիւն, որ կարող էինք նրանց նուիրել—ընակարանները տաքացնելու և լուսաւորելու մեր կատարելազործուած միջոցները։ Նրանք տնկրը լուսաւորելու համար սկսեցին գործածել նախ նաֆթ, ապա էլէքտրականութիւն, որի տարածմանը նպաստելու համար յիսունի չափ ընկերութիւն կայ ամբողջ կայսրութեան մէջ։

Մնում է ուրեմն տան տնտեսական հարցը, որի մէջ ևս ճապոնական տունը գերադասելի է։ Այսպիսով տեսնում ենք, որ իրանց մասնաւոր ընակարանների մէջ ոչինչ գրեթէ մտցըրած չեն ճապոնցիք՝ մեզնից փոխ առնելով։ Իսկ եւրոպական յատակագծերի վրայ կառուցուած շինութիւններն էլ մի կողմից տնտեսագիտական հաստատութիւններն են—գործարաններ, գրամատներ, և այլն,—իսկ միւս կողմից հասարակական հիմնարկութիւններ—պաշտօնատներ, խորհրդարաններ, համալսարաններ, զօրանոցներ։ Պէտք է արդեօք աւելացնել, որ շատ յաճախ այս փոփոխութիւններն եղած են Արևմուտքի վրայ որոշ բարոյական տպաւորութիւն թողնելու համար, քան թէ դրական անհրաժեշտութեան համար։ Նախկին փայտաշէն պաշտօնատներում նրանք նոյնչափ լաւ կարողանում էին տեսնել իրանց գործերը, ինչպէս աղիւսէ նորաշէն հաստատութեան մէջ։ Բայց օտար քաղաքական ուժերի ունեցած իրաւունքի հաւասարութիւնը ձեռք բերելու համար՝ օգտակար կը լինէր նրանց ցոյց տալ եւրոպական մտքով պատկառելի արտաքին ունեցող շէնքերի ճակատներ ճապոնի մայրաքաղաքում։

Մնունդից ու ընակարաններից յետոյ՝ վերջապէս հասնում ենք զգեստներին։

Ու է երկը հագուստը դատելու համար, պէտք է խնդիրը զննել առողջապահական, ապա յարմարութեան և վերջապէս տնտեսական տեսակէտներից։

Հագուստի առողջապահականը ամենից աւելի կախուած է իր տարրերի բաղադրութիւնից։ Յիշատակենք, որ ընդհանուր առմամբ, ճապոնական զգեստը կարժէ առնուազն մերինը,

լինի նիւթով, քանի որ գործածուած բամբակն ու մետաքսը տաքութեան չափաւոր հաղորդիչներ են, լինի իր արձակ ձևով, որի առաւելութիւնները շատ պարզ են: Թուենք նաև, առողջապահական հայեցակտով իբր կարեւոր մաս, սովորութիւնը թղթէ թաշկինակների, որ մի անգամ գործածուելուց յետոյ դէն են շարտում. ուրեմն Մոնտէների<sup>1)</sup> ծիծաղը շարժող մեր թաշկինակներից այնչափ տարբեր են:

Ինչ վերաբերում է զգեստի պատշաճաւորութեանը, դրա մէջ նաև նկատի առնելու է գեղեցկութիւնը: Աւելորդ է կանգ առնել ճապոնական հագուստի՝ ազնուականութեան ու վայելչութեան վրայ, համեմատած օտարների հագուստների հետ, որ տոկիօցի մի գերձակ իր խանթի ցուցակի վրայ անուանում էր. «Եւրոպացիների կապկային ժաքետ»: Ինչ որ կարելի է քննադասել գեղազիտական կողմից՝ դա կանացի ահազին գօտին է, որի հանգոյցը խիստ ծանր է: Ցարմարութեան տեսակէտից նախապատութիւնը մեր կողմն է, որովհետև ճապոնական հագուստը, որ հրաշալի է հանգստաւէտութեան համար, ընդհակառակը մերինից աւելի անյարմար է աշխատանքի ժամանակ: Բայց ընկերական պատշաճաւորութեան մէջ ճապոնացիք գերազանցապէս փափկանկատ են, խօսքու ամօթխածութեան մասին չէ, որի մէջ նրանց գաղափարները իսպառ տարբեր են, քանի որ արևմտեան կանացի հագուստի ամենաչնչին պճնանըն անգամ անբարոյական են համարում, ոչ. այլ այն ինչոր ուզում եմ մատնանիշ անել, դա ճաշակի այն կատարեալ ըմբռնողութիւնն է, որը միայն երեխաներին է թոյլ տալիս աշխի զարնող գոյների գործածութիւնը. այդ միենոյն ըմբռնողութիւնը հրամայում է խիստ չափաւոր երփներանգութիւն հչ միայն կանանց, այլ և օրիորդների զգեստների համար, որպէս զի ամուսնանալու նպատակով վաճառքի հանուածների տեսք չունենան: Վերջապէս այդ միենոյն ըմբռնողութիւնը պահանջում է (ուշադրութեան արժանի գիծ է սա), որ հագուստի միայն ստեղմութեան մէջ երեացող մասը, այսինքն աստառը, աւելի գեղեցիկ լինի, քան արտաքին կերպասը: Նկատենք նաև, թէ ճապոնական արդուզարդը, որ յաճախ շատ ճոխ է հէնց իր արտաքին պարզութեան մէջ իսկ, մերինից աւելի աժան է նստում, որովհետև նորաձեւ քսահաճոյքին չէ ենթարկւում: Այս առթիւ չի մոռանանք նոյնպէս, որ ճապոնացիք երկար դարերից ի վեր հրաժարուած են թանկագին քարերի

<sup>1)</sup> Խոսքը քրանսիացի հռչակաւոր գիւմառփայ Մոնտէներ (1533—1592 թ.) մասին է:

գործածութիւնից, մի բան, որ նախնական դաշտերի հետքն է և որի գործածութիւնը մեր քաղաքակրթական վիճակում բաւական տարօրինակ է:

Ուրեմն հասկանալի է, որ ճապոնացիք իրանց ազգային հագուստը փոխելու ոչ մի լուրջ պատճառ չունէին. և, իրօք, խոշոր մեծամասնութիւնը հաւատարիմ է մնացած. իսկ եթէ մի փոքրամասութիւն էլ գործածել է սկսել հւրովարկան զգեստներ, այդ ևս ծագում է բոլորովին տարբեր պատճառներից, ուրոնցից ամենամեծն է դիւանագիտական հայեցակէտը: Ճիշտ է, որ մարդկային ցեղերից իւրաքանչիւրն իրան երկալայում է իրը ամենատառաջնակարգը, և պէտք է խոստովանել, որ դա մեզ և եւրոպացիներին էլ օտար չէ: արդ, մենք այդ ընդունենք թէ չընդունենք, հագուստի հարցն այդ խնդրում իր կարևոր կէտն ունի, որովհետեւ, գժբաղդաբար, մեր երկալայութեան մէջ իրերի հիմքն ու ձևը միացած են մի կապով. եւրոպական հագուստը՝ բոլորովին բնական ճանապարհով մեզ թւում է իրը ճշմարիտ քաղաքակրթութեան արգասիք գերազանց ձեւի տակ: Ուստի և ճապոնցիք մտածել են, որ, օրինակի համար, սպիտակամորթ ցեղից մի դիւանագէտ հաւասարութեան աւելի կամաւոր իրաւունք պիտի տայ իր գենիսամորթ պաշտօնակցին, եթէ սա որդէնսգոտով է, քան թէ նրան, որի արևելեան վերաբէկուն իր հոգու մէջ պիտի զարթեցնէ ստորին էակի հանդէպ լինելու տպաւորութիւն: Անա թէ ինչու նրանք նուրբ հոգեբանութեամբ շատ շուտով ընդունեցին պալատական, քաղաքային-պաշտօնական, և զինուորական նոր համազգեստներ: Ճիշտ է, որ զինուորական համազգեստի կողմից, եւրոպականն աւելի լաւ է յարմարեցուած նոր զէնքերի գործածութեանը, սակայն, այդ դէպքում իսկ, ինքնատիպ գիծ. նրանք իրանց զինուորներին կաշուէ կօշիկներ հազցնել տուին միայն խաղաղութեան ժամանակ, այն ինչ պատերազմի շրջանում դարձեալ շարունակում են գործածել իրանց նախկին տրեխները, որ քայլելու և գործելու աւելի նպաստաւոր են: Պարզ է որ այդ միապետական երկրում բարձր դասից սկսուած, օրինակը արձագանգ էր գտնելու նաև ժողովուրդի մէջ. և իրօք ընկերական որոշ դասակարգ անմիջապէս իւրացը եւրոպական հագուստի որոշ մասեր պարզ քմահաճոյը իրանց նախկին ազգային հագուստները այն ըոպէից, երբ մտնում է մինիստրութեանց մէջ: Փալով կանանց՝ ամբողջովին վերըսած են նախկին-հագուստների գործածութիւնը: Իսկ տղա-

մարդիկ վերջ ի վերջոյ պահում են միայն եւրոպական գըլ-խարկներ, միակ բանը, որ կարելի է տեսնել յարատևելիս մի խումբ ճապոնական ամբոխի մէջ:

Ուրեմն զգեստների, բնակարանների և մննդի կողմից ոչ մի լուրջ փոփոխութիւն չկայ: Այս երեք էական կարիքների մէջ ճապոնը պահել է իր քաղաքակրթութիւնը, որ առնուազն արժէ մերինը: Բացառութիւն են կազմում միայն պաշտօնական հացկերոյթները, պաշտօնական հաստատութիւնները և համազգեստները, որովհետև այս խնդրում մեր հին կանխակալ կարծիքներն ստիպում էին, որ ճապոնն էլ մեր ձեռվ վարուէր: Բայց իրանց մասնաւոր կեանքում կողմնակի անձինք ոչ մի բան գրեթէ չեն փոխած իրանց ազգերու հին ձեռմ, կամ եթէ դէս ու դէս երեսում էլ են խելքի փչուած բացառութիւններ, դրանք ևս իսկոյն վերադառնում են կրկին հսկն:

Այժմ անցնենք իսպառ տարբեր, սակայն խիստ արժէքաւոր մի այլ կարիքի—առողջապահութեան հարցին, որի մէջ մտնում են բժշկութեան, վիրաբուժութեան, առողջապահուհեան բոլոր ձեւերը: Այստեղ ընդհակառակը, մեզնից են փոխառել ճապոնացիք ամեն ինչ, որովհետև, այս կէտում, ճշմարիտ որ, նրանցից գերազանց էինք:

Անկասկած, նախկին իշխանութեան օրով, բժշկութիւնը ճապոնում ընդարձակ տեղ էր բռնում արդէն: Ասատա Սոհակու հոչակաւոր բժիշկը, Լայբնիցի պէս, մտածում էր, թէ. «մարդուս գլխաւորապէս պէտք է զբաղեցնեն երկու բան.—բարյականութիւնը, որ սովորեցնում է ղեկավարել կեանքը. բժշկութիւնը, որ սովորեցնում է պահպանել կեանքը»:

Եւ իրօք, ճապոնցի նախկին բժիշկները շատ առաջ էին գնացած որոշ ճիւղերում—բժշկական նիւթերի համար՝ բուսաբանութեան մէջ, բժշկական արուեստի կողմից՝ մանկաբարձութեան մէջ, Սակայն նրանց պակասում էին էական տարրեր —անդամազնական գիտութեան ուսումնասիրութիւնը: Հասկանալի է, թէ ինչ հացածունքով նրանք ընդունեցին Արևմուտքի բժիշկներին և ուշը գարձրին սրանց թանկագին գիւտերի վրայ: 1858-ից սկսած, հաստատեցին պատուաստի համար ուրոշուած մի հիմնարկութիւն, որ երեք տարուց դարձաւ Տոկոյի բժշկական դպրոցը. արդի համալսարանի սաղմն էր դա. և չի մոռանանք, որ 1873-ից ի վեր երեխայոց պատուաստումը պարտադիր է արդէն ճապոնում, մի բան, որ ճենների<sup>1)</sup> հայրենիքում դեռ գոյութիւն չունի:

<sup>1)</sup> Ընթերցողին յայանի կը լինի արդէն որ այստեղ խօսքը վերա-

Յետոյ գերմանական համալսարաններից կանչւում են ամենաւ-  
լաւ ուսուցչապետներից մի քանիսը, որպէսզի Տոկիօյում բը-  
ժշկութիւն դասաւանդեն: Այժմ Ճապոնի ամեն կողմերում  
հիմնուում են արդէն այնպիսի հիւանդանոցներ, ուր այցելիս  
եւրոպացիներս չենք կարող հապատանալ մեր գերազանցու-  
թեամբ: Բաղմաթիւ համախմբութիւններ են կազմւում, լինի  
բժշկական լրթութիւն տարածելու նպատակով, լինի բարե-  
գործութեան համար, օրինակ՝ յիշատակութեան աշխանի է  
կարմիր—Խաչի հիանալի ընկերութիւնը, որ վեց հարիւր հա-  
զար անդամ ունի և որի լոկ անդամավճարներից ստացւում  
է տարեկան չորս-հինգ միլիոն, մարդ գլուխ վճարում է տա-  
րին եօթը ֆրանկ ու կէս (մօտ երեք բուրլի): Վերջապէս, ե-  
րեսուն տարուայ մէջ բժշկութիւնն այնտեղ տարածւում է և  
յաղթանակներ տանում ողջ պետութեան մէջ, սկսած հա-  
մալսարաններից, ուր մէկից աւելի կարեոր գիւտեր են եղած,  
մինչև ամենայետին գիւղը, ուր տեղացի, պարզ բժիշկները  
ձեղ կը պատմեն Եւրոպայում կատարուած ամենավերջին գիւտը  
արեան շինուկի մասին: Ուրեմն բժշկութեան այս ամբողջ  
սահմաններում կատարեալ փոխակերպութիւն է տիրում, ո-  
րովհետև մենք գերազանց էինք:

(Վերջը յաջորդ համարում:)

բերում է անզլիացի հոչակաւոր ճեններին, որին պարտական ենք Ճաղ-  
կաղկախտի պատուասաման կենսարժէք գիւտը.

Ե. Թ.